



ՄԵԼԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները 7 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

ՏԵԼԵՓՈՆ № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
ըրաքանչիւր բառին 2 կոպեկ.

ՏԵԼԵՓՈՆ № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քաղաքական դրութիւն. Հեռագիրներ. Ներ-
քին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Մեղրից. Ներքին
լուրեր. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վերջին տեղե-
կութիւններ. Շարժել-լուրեր. Նամակ Պարսկաս-
տանից. Արտաքին լուրեր. — ՀԱՅԱՍՏԱՆԻՆԻՐ-
ՔՕՐՄԱ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱ-
ԿԱՆ. Ձկնորսութիւնը Սեանի ծովափում:

ԲՈՎԱՐԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆ

Եւրոպական դիւլոմատիան կարծես նոր
շաւիղ է ընտրել և մտադիր է ներկայ քա-
ղաքական խնդիրները լուծելու համար
ձեռնարկել զործունեութեան նոր եղանակ-
ները և միջոցները: Եւրոպական ներգաշ-
նակութիւնը կարելի է դանում փոխել իր
մինչև այժմ բանած ուղղութիւնը, որով ոչ
մի հարց չէր լուծվում իսկապէս, և զոր-
ծադրել աւելի էականը և զործնականը:

Մենք հասկանում ենք, թէ որքան լուրջ
և ծանր է եւրոպական պետութիւնների
միմեանց հետ ունեցած յարաբերութիւն-
ների խնդիրը: Մենք գիտենք, թէ որքան
միտնաբեր են այնպիսի քաղաքական բար-
դութիւններ, որոնք կարող են ընդհարում-
ներ առաջ բերել, որովհետև այդ ընդ-
հարումները կարող են հրդեհել ամբողջ
Եւրոպան, առաջացնել սարսափելի պատե-
րապէսներ և այնպիսի հետեանքներ, ինչ-
պէս այդ եղաւ Փրանս-գերմանական պա-
տերապմի ժամանակ, երբ ամբողջ նահանգ-
ներ մի երկրից խլվեցին և միւսին տրվե-
ցին:

ձեռք է պատերազմը իր կորստաբեր հե-
տեանքներով մի սարսափեցնող ուրուական
է դարձել եւրոպական պետութիւնների
համար և նրանցից իւրաքանչիւրը մի կող-
մից սաստիկ զինվում է, իսկ միւս կողմից
աշխատում է, որպիսի կարելի է, հեռու
պահել իրան ընդհարումներից, չը խախ-
տել խաղաղութիւնը, որ լաւ թէ վատ ա-
յաջողութիւն է եղածը: Այստեղից ծագում
է եւրոպական ներդաշնակութիւնը, եւրո-

պական խաղաղութիւնը պահպանելու այն
մեծ հոգսը, որ պատել է ամենքին:

Եւ սակայն եւրոպական այնպիսի մի սխալ
ուղղութեան էր հետևում եւրոպական
ներդաշնակութիւնը և խաղաղութիւնը պահ-
պանելու համար, որ նա փոխանակ
հանգստութիւն և անդորրութիւն հաս-
տատելու, առաջ էր բերում նոր բար-
դութիւններ, նոր զրգումներ, նոր քա-
ղաքական կնիքներ: Ինչո՞ւ. որովհետև եւ-
րոպական փոխանակ ձգտելու նոր ծագած
խնդիրները լուծելու, աշխատում էր
նրանց բացասել, նրանց չը տեսնել, նը-
րանց խեղդել: Այդ մի և նոյն է, եթէ
բժիշկը փոխանակ վէրքը բժշկելու, աշխա-
տէր նրան ծածկել և այդպիսով ազատվել
նրանից:

Եւրոպական դիւլոմատիայի առաջ դըր-
ված են մի շարք խնդիրներ—եւրոպական
հայտնականների և առհասարակ քրիստոնեա-
ների ապահովութեան խնդիրը, եղբայրութիւն,
կրօնէի, կրօնութիւն, ներդաշնակութիւն, եւրոպական
կապիտալների ապահովութեան և այլ կա-
րեւոր խնդիրներ: Միթէ՞ կարելի էր այդ
խնդիրները բացասել և նրանց չը դառն հա-
մարել: Եւրոպական պետութիւնները շատ
ձիգ թափեցին խնդիրներ այդ խնդիրները
և նրանց լուծումը յետաձգելու: Սակայն
իրենք լուծելու մի անգամ ևս ապագայից,
որ խնդիրները պէտք է լուծել և ոչ
թէ բացասել կամ խեղդել:

Եւրոպական պետութիւնները ըստ երե-
ւոյթի այս անգամ հաստատ վճռել են
աւելի էական և նպատակայարմար միջոց-
ներ ձեռք առնել միջազգային կնիքով խն-
դիրները լուծելու և լուծելու համար, և այդ-
պիսով աւելի ամուր հիմքերի վրա ապա-
հովել եւրոպական խաղաղութիւնը:

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(Ռուսաց զործակալութեան)

Լ. օնդ. 18 հոկտեմբերի: «Daily News»
լրագրի մէջ տպւած է հետեւեալը. «Կ. Պոլսում

և կառավարչական պայմանները: Երկու կողմերն
էլ, իբրև հաւասար ընկերներ, տարվայ վերջը,
ընդհանուր հաշուաւթեամբ, ինչպէս օգուտը,
նոյնպէս և վնասը բաժանում են երկու հաւա-
սար մասերի, նախապէս զուրս գալով թէ կա-
պալաքնի մայր գումարը, և թէ կողմնակի ծախ-
սերը: Կան նաև այնպիսի կապալաւորներ, ո-
րոնք ծախում են մաս-մաս ձկնորսական բաժին-
ները (ավազներ) զանազան ձկնապաններին:

Ձկնորսութեան մասերը բաժանվում են հետեւեալ
ավազների (увазков), որոնք են՝ «Նախաբազան»,
«Գուրան», «Խառնութեւ», «Սարի-դայա» և
այլն, դեռ չը հաշւած այն բազմաթիւ ավազնե-
րը, որոնք գտնվում են ծովափայլ զանազան
գիւղերի մօտ և որոնցից օգտվում են տեղական
բնակիչները: Ձկնորս անուանվում են՝ «Իչ-
խան», «Կողայ», «Բախտալ» «Եղա-բալուդ»,
«Երեղու» և այլն, իսկ Քալաւա-չայ գետի ձուկը
յայտնի է «Եղաբալուդ» անունով:

Եթէ համեմատելու լինենք ձկան պլանն
սակագինը սրանից 10—20 տարի առաջ վճար-
ված սակագինի հետ, նրանց մէջ ահագին տար-
բերութիւն կը գտնենք:—Մենք լաւ յիշում ենք,
որ թէ ծովակի և թէ բուրբ գետերի ձուկը ա-
ռաջ ծախվում էր տարեկան 30—35,000 ռ.-
կամ երեք տարեկանը միատուգ՝ 100,000 ռ.:
Իսկ այժմ այդ սակագինը հազիւ է հասնում
տարեկան 20,000 ռուբլու: Անցեալ 1893—94
թվերին կապալով տրվեց ձուկը 17—18,000 ռ.
տարեկան (երկու տարեկան 35,000 ռ.), իսկ 95
թվին 12,000 ռ.: Ձը նախկին, որ այժմ ձկան
սակագինը կիսով չափ է փոքանցել է, բայց
այնու ամենայնիւ, կապալաւորները դարձեալ

իրենք վիճակը սաստիկ երկիւղ է յարուցանում:
Իրաւամարտական չըբաններում, ուր նորից յա-
րուցվել է սուլթանին դաժնեկէց անելու խն-
դիրը, հաստատվել է այն կարծիքը, թէ կամ ա-
ռ. որ անուանված տուրքերը իսկապէս մի կ ոչ
են զէպի մուսուլմանները ընդհանուր յարձա-
կում գործելու քրիստոնեաների վրա: Հաւանա-
կան է, որ դրա հետեանքը կը լինի ընդհանուր
կոտորած: Յայտնի եղաւ, որ երկուշաբթի օր,
առտորո-սկզբարական դեպքանի մօտ կայացած
խորհրդակցութիւնից յետո՞յ պետութիւնների Կ.
Պոլսի ներկայացուցիչները հեռագրեցին իրանց
կառավարութիւններին, խնդրելով հրահանգներ,
այլի առաջ ունենալով առաջիկայում նրանց
կարծիքով տեղի ունենալիք զէպիքը: Ենթադ-
իշումը գտնվում է իշխող-կիսակում, իբր թէ
սուլթանի հիւր, իսկ իրապէս իբրև բանտար-
կեալ:

Կ. Պոլիս, 19 հոկտեմբերի: Կեսպանները
յայտնեցին, որ զէպերը ձեռք բերելու համար
նախագծված դրամական տուրք փողովելու մա-
սին թիւրք կառավարութեան տուած բացառ-
ութիւնները իրանց չը գոհացրին, որի պատ-
ճառով նախագիծը, ըստ երեւոյթի, թողված է:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՄԵՂՐԻՅ

Հոկտեմբերի 5-ին
Ջանգեղուրի դաւառում, ուր, բացի Ֆէլդշեր-
ներից, յատկապէս նշանակված ծաղիկ պատ-
ւաստող չը կայ, գիւղական բժիշկի կարգա-
դրութեամբ, ներկայ թիւ մայիսից չըբնից 70
գիւղ և պատուաստեցի աւելի քան 1000 երե-
խայի նախադասաւորական ծաղիկը: Բաղդ ու-
նենալով մասամբ ուսումնասիրելու տեղացիներ-
ին, եկալ այն համոզմունքին, որ եթէ ծաղիկ
պատուաստումը պարտադիր չը լինի, Ջանգե-
ղուրում բնական ծաղիկը դեռ շատ զոհեր կու-
նենայ, ինչպէս մինչև այժմ է ունեցել:

Իմ պատած գիւղերից բանի մէջ, չը նայած

միաս են կրում: Գրանից պարզ երևում է,
որ ձկան բերքը հեռո՞հեռ է նուազում է թէ
Սեանի ծովափում և թէ նրա մէջ թափվող
գետերում: Միայն Քալաւա-չայ գետում նախկին
տարիննում ձուկը որսվում էր աշնան նուա-
զում (3—4 ամիս) մօտ 4—500 բեռ (բեռը բաղ-
կացած է 400 հատից): Այն ինչ 94 թվին, ինչպէս
ցոյց են տալիս մեր հաւաքած տեղեկութիւննե-
րը, նոյն գետում որսացել են 40—50 բեռ միայն,
իսկ անցեալ 95 թվին՝ կրկնակի քանակու-
թեամբ, որ ասել է, այժմ ձուկը գետերում
որսվում է նախկին բերքի 1/10 մասը և կապա-
լաւորները վնասներ են ունենում: Վերջին ձեղ-
նորական սեղանում առաջին երկու տարում
կապալաւորները 4—5000 ռ. գեթիցիտ ունեցան:
Այժմ կառավարութիւնը խառնութեամբ պահան-
ջում է, որ կապալաւորները ուսկանների գոր-
ծուածքը շատ նոսր անեն, որպէս զի մանր
ձկները չը որսացվեն, այլ մնալով մեծանան և
ապա յաջորդ տարին՝ իբրև բեռանա՝ ձուկ՝ որս-
վեն: Բացի այդ, այժմ կառավարութիւնը, ինչ-
պէս լուր ենք, պահանջում է ձկնորսներից, որ
զաղարեն «Թափ» կոչված կողմերում ձուկ
որսալուց և այլն: Կառավարութեան այդ պա-
հանջները թէև վաղուց գոյութիւն ունեն, սա-
կայն կապալաւորները իրանց չափերի համար
չեն կատարում այդ իրաւացի պահանջները:

Ձկան մասին խօսելով, հարկաւոր եմ համա-
րում յիշել, որ սկզբում, 1828—30 թվականին
ին, Նոր-Բայազէտի բնակիչները գաղթելով
Թիւրքիայի Հին-Բայազէտից, երբ կանոնում էին
իրանց գաղթականը հաստատել մի ուրիշ քա-
ղաքում, օրինակ Թիֆլիսում, որտեղ Կ ու կ ի ա

որ հարեան գիւղերում ծաղիկը տարածված էր,
ծաղիկ պատուաստել չը տուեցին, իսկ վերա-
պատուաստումն՝ տանեակ տարիննում և ոչ մի
գիւղում:

Ծաղիկ պատուաստման տարածելուն շատ վը-
նասում է զանգեղուրցի գիւղացու հակացողու-
թիւնը: Մի գիւղում քահանայ ասեց ինձ, որ
այդ օրը լուսնի չար օրն է և անկարելի է ծա-
ղիկ պատուաստել: Մի այլ գիւղում իրանց ե-
րեխաներով մօտս հաւաքված մայրերը՝ առանց
ինձ մի խօսք ասելու և առանց ծաղիկ պատ-
ւաստել ապու՛ց ցրվեցին, որովհետև մի հեղինա-
կաւոր պատաւ փաշտացել էր: Մի գիւղում լի
համոզմունքով յայտնեցին, թէ երեխայի ձակա-
տին ինչ որ գրված է, այն էլ կը կատարվի: Մի
փոքրիկ գիւղում էլ պատկառելի դէմքով ու
հագուստով մօլլան աշխարհ ասում է ինձ.

«Միբղա, ծաղիկ պատուաստելը խաբեբայութիւն
է: Պատուաստի վէրքը չաբաթներով տանջում է
երեխային, և ցմա՛հ վառոյժ է դարձնում նրան:
Ես մի կտոր թղթի վրա գրած աղօթք եմ աղ-
ւել կոնեքին կարելու: Շատ տեղ մի գիւղից
միւսը գնալուց օրերով դրաստի համար սպասել
են տուել, որից հետեւ է այն, որ հորթաւիչի
բացված սրունկը ուժից ընկել է, իսկ չը բաց-
վածն էլ հնազել, որոնցով ծաղիկ պատուաս-
տելն անկարելի է եղել:—Ինձ մօտ այժմ տա-
նեակներով սրուակներ կան այդ զբաղղութեան
ենթարկված:

Տեսէք թէ պատաւ, տէրտէր, մօլլան և տա-
նուէրն իրանց հրէշաւոր տգիտութեամբ ինչեւր
չեն անում ի վնաս իրանց հետադուքին:

Մի տեղում, որի հարեան գիւղում ծաղիկ
կար, տեսնելով, որ ոչ մի խօսք չէ աղղում, իմ
կողմից իւրաքանչիւր ծաղիկը կտրելի երեխային
5 կոպէկ վարձ առաջարկեցի: Բայց որքան և-
ղաւ իմ դարմանը: Նրանք ընդունեցին ծաղիկ
պատուաստելը, միայն թէ 10-ական կոպէկ վը-
ճարէի:

Մի քանի խօսք էլ բացառութիւնների մասին.
ոչ թէ ներկայ թվին, այլ նոյն իսկ մի քանի
տարիննից դէսը, գտնվել են հասարակութիւն-

կոչված քաղաքամասը յատկացրել էին Հին-Բա-
յազէտի գաղթականներին, այն ժամանակ, աչքի
առաջ ունենալով ձկան մեծ առատութիւնը,
Նոր-Բայազէտ քաղաքի հիմնադիր հանգուցեալ
Մկրտիչ աղա Արծրունիի բարեօր է համարել
գաղթականութիւնը հաստատել իր այժմեան
տեղում, այն նպատակով, որ եթէ նոր գաղթա-
կանները որ և է կողմնակի եկամուտ չունենան,
կարող են նոյն իսկ ձկն ու պարել: Եւ իրաւ,
այդ թափաններին ձուկը այնքան առատ էր
այդ ջրերում, որ, ինչպէս պատմում են, կուժը
ջուր լցնելիս՝ ձկները երբեմն թափվում էին
կտրերի մէջ... Եւ այդ ժամանակներում ձկան
կապալ առած բանը չը կար, այլ թէ ծովակի և
թէ գետերի չուրջը բնակվող փողովուրդը օգտ-
վում էր ձկան այդ հարուստ բերքից, առանց
որ և է վարձ վճարելու:

Բայց այդ բոլորի հակառակ, այսօր Նոր-Բա-
յազէտի բնակիչներին մեծամասնութիւնը ոչ թէ
միայն չէ կարողանում էժան գնով ձուկ ձեռք
բերել, այլ և կարօտ է ձուկ ուտելուն, որը
անմատչելի է նրան գին կողմից: Հէնց այդ է
պատճառը, որ տեղական փողովուրդի մէջ առած
է դառել և միշտ ասվում է, թէ «Ձատիկին ձուկ
գնելու մարդ Նրեան լինի, իսկ արաղ գնելու՝
Նոր-Բայազէտ», որովհետև այդ օրը Նոր-Բայա-
զէտում ձկան հատը 50—60 կօպ. արժէ, իսկ
օղին «տրեցատկան» 8—10 կօպ.: Այն ինչ երե-
ւանում նոյն օրը ծախվում է ձուկը՝ հատը 30—
40 կօպ., իսկ օղին՝ 15—20 կօպ.:

Գ. Ս.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՁԿՆՈՐՍՈՒԹԻՒՆԸ ՍԵԱՆԻ ԾՈՎԱՓԱՆՄ

Կառավարչական կանոնների հիման վրա, ձըկ-
նորսութիւնը Սեանի ծովափում երեք տարին մի
անգամ (չորրորդ տարին) արգելվում է, որպէս
զի այդ ընդմիջված տարում ձուկը աճի և մե-
ծանայ: Այդ ընդմիջված տարվայ աշնանը առնուրդ
է լինում ձկնորսութիւնը ամբողջապէս կապա-
լով տարու համար, թէ միանուագ երեք տարով
և թէ մի տարով: Ծովակի հետ միասին կապա-
լով են տրվում նաև այդ ծովակը թափվող Քա-
լաւա-չայ, Ծակ-Քար և Գեղալ-Քարա գետերը,
որոնց վերջնում են թէ նոր-բայազէտի և թէ օ-
տարեկարացի հարուստ վաճառականները, որոնց
թոււմ յաճախ եղել է թիֆլիսեցի յայտնի դրա-
մատեր Մեղրիկոյ:

Կապալաւորները, վերջնելով ձկան կապալը,
ընկերանում են Նոր-Բայազէտի տեղական
ձկնորսների հետ, որովհետև առանց տեղա-
կան ձկնորսների մասնակցութեան կապալա-
ւորներից ոչ ոք չէ կարող կատարել ձկնոր-
սութիւնը, և սկսում են ձկան որսը: Ձըկ-
նորսները, որոնք ներթափան կողմից միջին դա-
սակարգին են պատկանում, իրանց մօտը կա-
պալաքնի փոխարէն ունենում են միմիայն ձըկ-
նորսական պարագաները—ուսկաններ, նաւակ-
ներ և այլն, և իրանց աշխատութիւնը, իսկ կապա-
լաւորները յանձն են առնում ընդհանուր ծախսը

ներ, որ իրանք են ինձ հրախել ծաղիկ պատ-
ւատելու: Այդպիսինքն լրջմտորէն են վերա-
բերվում զէպի ծաղիկ պատուաստելը:

Այս ամենից յետոյ սրտի ցաւով պիտի ասել,
որ Զանգեզուրում, բացի ծաղիկով մեռածներէից,
կան բազմաթիւ արատաւոր ու տղեղացած երե-
խաներ, որոնք հարկաւ գեղեցիկ և զբաղիչ դէմ-
քով ծնված են եղել: Ուրեմն ծաղիկ պատուա-
տումը ստիպողական պիտի լինի և այն՝ մի քա-
նի հմուտ ծաղիկ պատուաստողների ձեռքով,
տալով այդպիսինքն կարելի եղածին չափ յար-
մարութիւն ու զիւրութիւն:

Մ. Շահանջ

ՆՆՈՒՅԻՆ ԼՈՒՐԻՐ

Երէկ, երկուշաբթի, հոկտեմբերի 21-ին, Նո-
րին կայսերական Մեծութիւն թագաւոր կայ-
սրը Նիկոլայ Ալեքսանդրովիչի զահակաւ-
թեան օրը, Սիօնի մայր-եկեղեցում, ներկա-
յութեամբ կովկասի կառավարչապետի պաշ-
տօնակատար կոմս Տաթչիչեւի, նահանգապե-
տի և զինւորական ու քաղաքացիական բոլոր
պաշտօնեաների, կատարվեց հանդիսաւոր գոհա-
ցողական մաղթանք: Մաղթանքներ կատարվե-
ցին նաև վանքի մայր-եկեղեցում և միւս դա-
ւանութիւնների եկեղեցիներում և աղօթատեղե-
րում: Քաղաքն ամբողջապէս զարդարված էր
դրօշակներով, իսկ երեկոյեան հրավառութիւն
կար:

Կիրակի, հոկտեմբերի 20-ին, ի Տէր հանգու-
ցեալ կայսր Ալեքսանդր III-ի մահվան տարե-
դարձի օրը, Սիօնի մայր-եկեղեցում, զինւորա-
կան և քաղաքացիական բոլոր բարձրաստիճան
պաշտօնեաների ներկայութեամբ, հանդիսաւոր
հոգեհանգիստ կատարվեց: Հոգեհանգիստներ կա-
տարվեցին և բոլոր ուսումնարաններում, վան-
քի մայր-եկեղեցում և ուրիշ դաւանութիւնների
եկեղեցիներում և աղօթատեղերում:

Մենք ստացանք վրաց նոր «Յնօրին փոքրէկի»
(Տեղեկատու թերթ) անունով լրագրի առաջին
համարը, որ դուրս է եկել ամսիս 20-ին: Այդ
թերթը, որ հրատարակվում է Վ. Գունիայի
խմբագրութեամբ, շատ սահմանափակ ծրագիր
ունի. առաջին համարը պարունակում է գործա-
կալութեան հեռագրերին, քաղաքային լուրեր,
մի քանի թատրոնական նկատողութիւններ, տե-
ղեկացոյցներ և յայտարարութիւններ: Թաղաքա-
կան մի փոքր նկատողութեան մէջ, նոր լրագրի
խմբագրութիւնը յայտնում է, որ իր ամեն մի
խօսքը պէտք է հիմնի զէպի երկրորդ և աղզը ու-
նեցած սիրոյ վրա և պէտք է աշխատի միայն
նրանց երջանկութեան ու բարիքի համար: Յան-
կանք, որ նոր լրագիրը, որքան որ այդ թիւղ կը
տա իրան իր ծրագիրը, իր գործունէութիւնը
հիմնի անաչառութեան և ճշմարտութեան վրա,
և կարողանայ նպաստել երկրի բոլոր տար-
րերի մէջ համեմատութիւն ու եղբայրսիրու-
թիւն տարածելու գաղափարի զարգացման:

Ինչպէս յայտնի է, ամեն տարի Պարսկաստա-
նից, Արշալոյսի կողմերից, չահաւան թափառա-
կան թուրք ցեղերը գաղթում են Մուղանի դաշտը
այնտեղ ձմեռելու համար և այդ պատճառով շարու-
նակ վէճեր են պատահում երկու երկրի սահմանա-
գիծային իշխանութիւնների մէջ, մասնաւոր
այդ կողմերում ուսւ-պարսկական սահմանային
գիծը կանոնաւորված չէ: Այդ գիծը կանոնաւորե-
լու համար, երկու պետութիւնները որոշել են
յանձնաժողովներ ուղարկել Մուղանի դաշտը:
Հոկտեմբերի 14-ին, Ռուսաստանի կողմից
նշանակված յանձնաժողովը ճանապարհ ընկաւ
Թիֆլիսից՝ Բագուի վրայով Մուղան գնալու: Ռու-
սաց կայսերական կոմսար և յանձնաժողովի նա-
խագահ նշանակված է գնդապետ Խելմիցի, քա-
րտուղար և թարգման ընդհանուր շտաբի պաշտօ-
նեայ Միրզաէվ և ասպետաթի Ժուլիով: Այդ երեքը
զինւորական միւնիստրութեան ներկայացուցիչ-
ներն են, իսկ ներքին գործերի, ֆինանսների և
պետական կառավարչների միւնիստրութիւններն ևս
ունենալու են միջազգային յանձնաժողովի մէջ
իրանց ներկայացուցիչները: Պարսից կառավա-
րութեան կողմից կոմսար նշանակվել է Ար-
շալոյսի նահանգապետը:

Պետերբուրգից հեռագրում են «Тифл. Лис-

ТОКЪ» լրագրին, որ ժողովրդական լուսաւորու-
թեան միւնիստր կոմս Գելիանով կաթում է
ստացել մարմնի ձախ մասում:

Թիֆլիսում ներկայումս տարածված են զա-
նազան վարակիչ հիւանդութիւններ երեխաների
մէջ—դիֆթերիա և սկարլատինա: Նահանգապե-
տը առաջարկել է քաղաքային առողջապահական
վարչութեան, ինչպէս և բոլոր գեղատեղիներին,
ձեռք բերել հակադիֆթերիային չիջուկ:

Ինչպէս հաղորդում է «Кавказ» լրագիրը,
Թիֆլիսի Սիօնի մայր եկեղեցու թանգարանում
մի հազագին ձեռագիր է գտնվել, որ գրված
է 7-րդ դարում, ոչ ոչ քան 787 թիւը: Գա մի
ժամագիր է, որի մէջ յիշատակված են և 7-րդ
դարի վերջում ապրող վրաց և յունաց թագա-
ւորները և եկեղեցու հայրերը:

Մասնագէտների և գործնական երկրագործնե-
րի մէջ բացվել է վէճ, թէ որչափ արդիւնաւէտ
է բամբակի մշակութիւնը կարայաղի դաշտում:
Այս տարվայ ցանքները պէտք է կարողանան
բաւականաչափ նպաստել այդ վէճի լուծման:

Հոկտեմբերի 15-ից, կանօւսուր երկեկու-
թեան համար բացվել են ուսուսանողական եր-
կրներում հետեւեալ երկու երկաթուղիները.—
Արեւմտեան-Սիբիրեան երկաթուղին, Չիկաքիս-
կից սկսած մինչև Օբ և Անդրկասպեան երկա-
թուղու կրանսօվոյսկիի ճիւղը: Ուրեմն այսու-
հետեւ Մոսկովայից կարելի է գնալ Օմսկ չորս օ-
րում, իսկ հինգ օրում—հասնել Օբի եղբայրը:
Այդ է երկու երկաթուղիներից կրանսօվոյսկիի
ճիւղը մեծ նշանակութիւն պէտք է ունենայ նը-
բանով, որ Ուղւն-Աղայի անցարտար նաւահա-
գէտը կը փակվի և նրա տեղը կը բռնի կրա-
նսօվոյսկիը, որն աւելի յարմարութիւններ է
ներկայացնում: Կարծում են, որ Ուղւն-Աղայի
բոլորովին կանայանայ և անմարդաբնակ կը
դառնայ:

Չեքիզով նահանգի աղւնականութիւնը ընդ-
հանուր ժողովով որոշել է կայացրել զիմեւ
կառավարութեան և միջնորդել, որ կրթութեան
պիմանալիս միտվի մէջ արմատական փոփոխու-
թիւնների կատարվին: Աղւնականութեան տեղե-
կագրի մէջ մանրամասն բացատրված է, թէ
զիմեւաղիաներում աւարտողները ոչ միայն լաւ
ըմբռնած չեն լինում հին լեզուները, այլ և
մայրենի լեզուի, պատմութեան, գրականու-
թեան, ինչպէս և ընական գիտութիւնների և
նոր լեզուների մէջ շատ թույլ են լինում: Ռեա-
լական դպրոցները նոյնպէս շատ քիչ են նպաս-
տում ընդհանուր զարգացման և քերականութեան
առաքանների մէջ աշակերտները դարձաւ շատ
թույլ են լինում: Փոփոխութիւնը պէտք է կա-
տարի այնպէս, որ այդ պակասութիւնները մի-
անգամայն վերանան և նոր սերունդը կրթվի
այնպիսի սխառեմով, որ ստանայ հիմնաւոր կըր-
թութիւն և նրա ընդհանուր զարգացման մակե-
րեցիկը այնպէս ստոր չը լինի, ինչպէս այժմ:

Պետերբուրգում վախճանվեց բուսաբանու-
թեան պրոֆէսոր Բատալին, որ բացի իր բազ-
մաթիւ գործերից յայտնի է և կովկասեան հա-
ցահատիկների, խոտերի և հումքերի հետազո-
տութեամբ:

Գրախմբաւ Վ. Օֆին թոյլատրված է հրատա-
րակել Պետերբուրգում, պրոֆէսոր Վ. Մորէստ-
ովի խմբագրութեամբ, առանց ցէնզուրայի, մի
նոր ամենօրեայ մեծ լրագիր «Всёобщая Газе-
та» վերնագրով:

«Черн. Вѣстникъ» լրագիրը հաղորդում է, որ
արտասահմանից Բաթում է հասել Կ. Պոլսի
անդլիական զեապանատան քարտուղար Կ. Կոր-
զու:

ԱՍՏՔԱՄԱՆԻՅ մեզ գրում են. «Ամսիս 12-ին,
չաքալի օրը, տեղիս օրինորդաց զարդոյի դահլի-
ճում կատարվեց սուրբ թաղամանիչների տօնը:
Այս տօնը առաջին անգամն է այստեղ կատար-
վում: Երբ ժամերգութիւնը վերջացաւ, ժողովր-
դի ահազին բաղմութիւն հաւաքվեց զարդ-
ոյի դահլիճում. ներկայ էին Արիստակէս արք-
եպիսկոպոսը և քահանաները: Ժողովը բացվեց

«Որք զարդարեցին» շարականով, որ երգեց օ-
րինորդների խումբը՝ երգեցողութեան ուսուցչի
մասնակցութեամբ: Այնուհետեւ նոյն զարդոյի տես-
չի պաշտօնակատար հայր Արսէն Ղլտճեան բացա-
րեց տօնի նշանակութիւնը: Յետոյ աշակերտու-
հիւները արտասանեցին զանազան ոտանաւորներ,
որոնք լաւ տպաւորութիւն թողեցին ներկայ
եղող հասարակութեան վրա: Թեմական զարդոյի
հարցը ձեռք արդէն յայտնի է, որ վերջացել է:
Շինութիւնը սկսել են Աստրախանում և բաւական
առաջ է գնացել յոյս կայ, որ միւս տարի պատ-
րաստ կունենանք Աստրախանի թեմական զեա-
րոցը: Շինութիւնը բաւական մեծ է և գտնվում
է ս. Պետրոս-Պողոս եկեղեցու դիմացը»:

ԲԱԳՈՒԻՅ մեզ գրում են. «Լուսմ հեր, որ մի
քանի մարդկանց մէջ յղացել է մի շատ բարի
միտք. մտադրութիւն կայ այստեղ եկող չքաւոր-
ներին օգնել, գտնելով նրանց համար յարմար
գործ. նոյն իսկ, եթէ հնարաւոր լինի, ուղւում
են կանանց և երեխաների համար ձորել մի
հեշտ և թեթեւ զբաղմունք, որ վարձատրէր նը-
բանց աշխատանքը: Կատարեալ աջողութիւն ենը
ցանկանում այդ համակրելի և իրապէս մարդա-
սիրական գործին»:

ԱԽԱՂԱՅԱՄԱՐԻՅ մեզ գրում են. «Մեր քաղա-
քի ինքնավարութիւնը, պաշտօնեաների հա-
տաովելուց յետոյ, հոկտեմբերի 1-ից սկսեց
իր գործունէութիւնը: Երէկ, հոկտեմբերի 16-ին,
կայացաւ լիազօրների առաջին նիստը, որ ամ-
բողջովին նուիրված էր անչաթ կայքերի նոր
գնահատման և պատենաների վրա քաղաքային
տուրք դնելուն: Շնորհաւորելով Ախալքալաքի
քաղաքային ինքնավարութիւնը, չէ կարելի չը
ցանկալ, որ լիազօրները մի քիչ լրջութեամբ
վերաբերվեն զէպի իրանց պարտականութիւն-
ները և շարաքննելով առաջ իրանց յայտնած
հարցերի մասին մի փոքր մտածեն, պատրաստ-
վեն և յետոյ գան ժողովի... Քաղաքը, առաջվայ
նման, թողված է կեղտերի մէջ»:

ԲԱԳՈՒԻՅ մեզ գրում են. «Ի նկատի առնե-
լով, որ քաղաքում օրեցօր բազմանում են աղ-
քատ և չքաւոր հայեր, որոնք տեղիս եկեղեցու
օգնութեան են դիմում, անցեալ կիրակի տե-
ղիս ծխականները ժողով կազմեցին և եկեղեցու
երէցփոխին յանձնեցին հող տանել այդ թը-
չուսուների մասին, որքան որ այդ հնարաւոր կը
լինի ծխականների տուած ողորմութեամբ: Երէ-
ցփոք, օգնական ունենալով մի քանի երիտա-
ւարդներ, արդէն սկսել է գործը»:

ՕՐԱՌԻՄԱԹԻՅ մեզ գրում են. «Մի քանի օր
առաջ տեղի ունեցաւ մեր փոքրիկ քաղաքի
ձայնաւորների ընտրութիւնը: Շնորհածնեք մեծ
մասամբ մասնակցականներ են: Պէտք է նկատել,
որ այս քաղաքում այնքան քիչ են ինտելիգենտ,
փոքր ի շատէ գործունեայ, և հասկացող մարդիկ,
որ հազիւ թէ քաղաքային դուռնի՝ զէթ առաջին
տարիներում, որ և է չօշափելի արդիւնը ցոյց
տալ»:

ՄԵՂՐԻ գիւղից մեզ գրում են. «Մեր գիւղա-
կան հասարակութիւնը այս օրերս կայացրեց մի
օրինակելի որոշում.—սաղայատակ անել զիւղի
փողոցները: Այդ որոշումը արդէն սկսել է ի-
րագործվել.—գիւղի մեծ փողոցի սաղայատակելը
արդէն սկսված է: Կատկած չը կայ, որ այդպի-
սով կարելի կը լինի գիւղը անհամեմատ աւելի
մաքուր պահել, մի յատկութիւն, որից զուրկ
են մեր գիւղերը: Այդ խեղացի որոշումը՝ մեր
գիւղական կեանքի մէջ պէտք է համարել մի
ուրախալի զէպը, որովհետեւ նա կարող է և ու-
րիշ գիւղերին օրինակ հանդիսանալ»:

Կաղզվանի ԵՊՆԻ գիւղից մեզ գրում են.
«Հոկտեմբերի 9-ին, Նախիջևանի սահմաններից
եկած աւաղակները մի խումբ յարձակվում է
Կողբից աղ բերող շիրակեցի սաղայատակների
վրա և խլում է 35 հատ եղն, վերաւորում է
երկու հայ և զերի է տանում երկու հոգի: Այս
տարի սահմանազրկի հայ գիւղերը մի քանի
անգամ ենթարկվել են Թիւրքիայից անցնող
բերրւ աւաղակների յարձակումներին»:

ԲԱԳՈՒԻՅ մեզ գրում են. «Թիւրքահայ գաղ-
թականները այստեղ էլ հասնաւ նրանց թուով

կան 40 հոգի ասորիներ, որոնք նոյնպէս ան-
տուն անաւել են մնացել: Օգնում են և այդ թը-
չուսուներին»:

ԱՂԻԱՄԻՅ մեզ գրում են. «Գաւառիս ա-
ւաղակութիւններն ու մարդասպանութիւնները
կրկին սկսվեցին այս ու այն տեղ երեան դալ:
Օր չէ անցնում, որ խեղճ գիւղացիներ չը գան-
գատվեն իրանց դուրսից. մի գիւղի մէկի
եզն են զոհանում, միւս գիւղի մի ուրիշի ձին,
գտնելը, կամ տունն են թալանում. առանց այդ
էլ հազիւ թէ կարողանում են օրվայ հացը ձա-
րել: Անցեալ գիւղերն էլ աւաղակների մի խումբ
արձակ մտնում է Սարուշէն գիւղը, իւր թէ տե-
րութեան կողմից ուղարկված, կանչում են դա-
տարին, որ չուտով զլիւսահարկը ժողովն և
ուղարկեն զանձարանը: Անմիտ դատաւորը իս-
կոյն և եթ կանչում է վեց նշանաւոր մարդկանց
(որոնց թուով և հարկահանն է լինում), որ
չուտով մնացած լրացեն, բայց անգութ աւա-
ղակները իսկոյն յարձակվում են այդ եօթը
մարդկանց վրա, բոլորին կոտորում, եղած փո-
ղեր վերցնում ու հեռանում»:

ԿԱՂԶԱՆԻՅ մեզ գրում են. «Ամսիս 29 ինչ,
կարսի յաջորդ եղիչ վարդապետ Մուրադեան
եկաւ Բագարան՝ հայոց յայտնի ուխտատեղի ս-
գէորդ եկեղեցին օծելու: Հանդէսին ներկայ էին
երեանի, իղդիրի, կարսի կողմերից եկող շատ
ուխտաւորներ, 2000 հոգուց աւելի: Եղիչ վար-
դապետը խօսեց մի կարճ և աղէկ, քարոյր, որ
խոր տպաւորութիւն թողեց ունկնդիրների վրա:
Ժողովուրդը ցանկացաւ վարձատրել քարոյչին
խաչահամբարով, բայց նա մերժեց ասելով, որ
այդ գումարը տան եկեղեցուն և նոր եկած
զաղթականներին, որոնք ամեն բանի կարօտ են»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Արտասահմանեան լրագիրներն ասելով, վա-
նում նորերս դարձեալ տեղի են ունեցել շատ
խոշոր անկարգութիւններ: Զինւորված հայեր,
թուով, ինչպէս լսվում է, մօտ 6,000 հոգի, յար-
ձակում են գործել թիւրքական զարնիզունի վրա,
որը շատ ծանր կորուստներ է ունեցել: Այս-
տամբութիւնը զսպելու համար, վալին հեռադ-
րով պահանջել է մի մեծ զօրախումբ ուղարկեց:

Եւրօպական ամբողջ մամուլը միաձայն պա-
խարկում է բունի փոխադրութեան ծրագիրը,
որովհետեւ այդ միջոցը միայն կը սաստկացնի
ընդհանուր գոգհոսութիւնը և ամենաաղետալի
հետեւանքներ կատարաւ: Այդ առիթով «Temps»
լրագիրը գրում է. «Վարչական անկարգու-
թիւնը չարաչարեք անսպասելի աղբիւր է
նրանց համար, որոնք իրանց պարտաւոր մի-
ջոցները պէտք է ստանան թիւրքական երթաղ-
րական ընդդէմէրից: Այս տարի չափազանց շա-
տացաւ այն պաշտօնեաների թիւը, որոնք կի-
սատ են ստանում իրանց ուժիկը, կամ բարո-
ւին չեն ստանում: Վերեցի մինչև ներքեւ, սկսած
պետական խորհրդի անդամից և մարչալից մին-
չև մինիստրութեան զոհապանք կամ հասարակ
զինւորը, ամենքը աշխատում են և գործում են
զրեթէ չի փառս Աստուծոյ՝ և նրանք, որոնք
սե օրվայ համար մի բան յետ չեն գցել, դա-
տապարտված են ամենաողորմելի դոյութեան:
Անցեալ տարի ուժիկ է արվել միայն 5 ամիւս
իսկ այս տարի միայն 3 ամիւս: Եւ այդպիսի պայ-
մանների մէջ խօսում են բունի փոխադրութեան
մասին՝ մի մէջիղբէից սկսած մինչև մի լիւրա
(4—23 ֆրանկ), սուլթանի իւրաքանչիւր հպա-
տակից: Գանձարանը յոյս ունի ստանալ այդպի-
սով 2 1/2 միլիօն լիւրա»:

Այժմ լրագիրները հաղորդում են, որ Կ. Պոլ-
սում կալանաւորեցին հայ փաստաբան Կոլօլեա-
նին ևս, որին յեղափոխականները մահ էին սպառ-
նում, եթէ նա չը մտցնի խոշոր գումար յօ-
գուտ իրանց գործի: Որովհետեւ սպառնալիքները
զօհ եղան ոստիկանական պաշտօնեաները, և ոչ
թէ ինքն Կոլօլեան, ոստիկանութիւնը կատկածեց
նրան, որ նա դաշնակից է կոմիտետի հետ և
թէ հնարել է սպառնալիքների այդ ամբողջ պատ-
մութիւնը: Կոլօլեանի ընկալարանն ուղարկված
ոստիկանական երկու պաշտօնեաները նահան-

գաղափարային ատրճառները խնդրեցին Սակայն նրանց խնդրերը մերժվեց, որովհետև նախա- գաղափար ցանկանում էր հայ յեղափոխականնե- րին կենդանի բռնել: Եւ որովհետև օստիկաննե- րը սպանվեցին, նախագաղափարը լուր տարածեց, թէ կոլոկանը առաջուց թագադրել էր յեղափո- խականներին իր բնակարանում, որոնք յետոյ, երբ օստիկաններն եկան սպառնալու նրան կարծեցեալ թշնամիներին, յարձակվեցին նրանց վրա և, խլելով նրանց ձեռքից ատրճառակները, ծանր վերքեր հասցրին նրանց:

Կ. Պոլսից հաղորդում են այն զօրեղ տպա- րութեան մասին, որ գործեց այնտեղ «Daily News» լրագրի հաղորդած լուրը, թէ թիւրքաց գործերը կարգադրելու համար համաձայնութիւն է կայացել Ռուսաստանի, Անգլիայի, Ֆրանսիա- յի, Աւստրո-Ունգարիայի և Իտալիայի մէջ: Սու- թանը Լօնդոնի իր դեսպանից մանրամասն գե- կուցում պահանջեց դրա մասին: Կ. Պոլսի քա- ղաքական շրջաններում հաւատացնում են, որ պետութիւնները միասին ընդհանուր քննարկնե- րի ծրագիր կառաջարկեն սուլթանին, և եթէ սու- թանը մեծի աչք ծրագրեր կամ թէ գործը ձգձիգ, անյապաղ զինուորական միջամտութեան կը դիմեն:

«Daily Chronicle» լրագրի թղթակիցը Պարի- ղից հաղորդում է, որ Սինտ-Մորէ փողոցի վրա կայացած մի միտինգ, որի նպատակն է Պարի- ղում ապստամբ դառն հայերի համար ժամա- նակաւոր ապաստարան հիմնել, մինչև որ կարելի լինի կոլոնիաները կամ ուրիշ տեղեր ուղարկել նրանց: Միտինգին հաւարակցին համակրող ան- ձինք և վճռվեց հանգանակութիւն բանալ: Փըր- թան թեան գործի Պարիզի բաժանմունքը նոյնպէս ջանքեր է անում այդ ուղղութեամբ: Մի քանի հայեր այստեղ սովից մեռնում են, բաւի բուն նշանակութեամբ Սակայն յոյս կայ, որ տեղա- կան հայոց կոլոնիայի հարուստ անդամների օգ- նութեամբ և յատուկ ֆոնդ հիմնելով կարելի կը լինի այդ սարսափելի աղբատութիւնը մի փոքր պակասեցնել:

«Central News»-ի գործակալութիւնը հաղոր- ւում է, որ Ելէյցարիայի կենտրոնական խոր- հուրը ստացել է 200.000 հոգուց ստորագրած հանրագրեր, որոնց մէջ առաջարկում են միջնոր- դել պետութիւնների առաջ արեւելեան քրիստո- նեաների ազատութեան մասին: Ստորագրու- թիւնների մեծ մասը ստացվում է ֆրանսիական կառնոններից:

Լօրդ Բոլդերիի և Գլադսթոնի հայեացքների մէջ եղած տարբերութիւնը շարունակում է հե- տաքրքիր առարկայ լինել անգլիական լրագրի- ներում: Հասարակական կարծիքը ընդունում է Բոլդերիի զգուշութիւնները, բայց հոգւով արտով Գլադսթոնի համարձակ քաղաքականութեան կողմն է: Եւ եթէ վաղը միւս օր Լօրդ Սօլսբերիի զիմի խիստ միջոցների և հնչեցնի պատերազմա- կան փողը, նա կը զանի ամենամեծ համակրու- թիւն և անկեղծ արձագանք հասարակական կար- ծիքի կողմից:

Ռուսաց գործակալութեան հեռագիրը հաղոր- ւեց, որ եւրոպական պետութիւնների դեսպան- ները բողոքեցին թիւրքիայի նոր ներքին փոխա- ութիւնն ղեմ: Եւրոպական և ռուս թերթները այսպէս են բացատրում այդ գործը: Եթէ թիւրքիան ցանկանար ուժեղացնել իր կանոնա- տուր գործը, իւրաքանչիւր եւրոպական պետութիւն կը համարէր այդ բանը օրինական և դուրս գե- լինէին օգնողներ արտաքին փոխառութեան մի- ջոցով: Իսկ երբ փող են ժողովում գիւղական զինուորական ոյժ ստեղծելու համար, այն ժամա- նակ մեծ կասկած է յարուցվում նպատա- կի վերաբերմամբ: Թիւրքական տեսակետից նայելով, գիւղական զինուորական ոյժ կարող են համարվել դաւադր քոյր մահմադական- ները, որոնք անհաւատներին սանձահարելու իրանց զիտումը կը տեսնեն խրախուսված և վարձատր- ված: Եւրոպական զիւլոմատները իրաւացի կեր- պով պահանջում են բացատրութիւններ, թէ ինչ նպատակով են ժողովվելու փողերը: Պետութիւն- ները կանգնեցնելով Անգլիայի միայնակ միջա- մտութիւնը, հասկալարին թիւրքիային, որ ամեն մի միջամտութեան խնդիր կոչւնանայ, եթէ

թիւրքիան անկեղծ կերպով սկսի վերանորոգու- թիւններ իր վարչական սխտեմի մէջ: Սակայն թիւրքիան չը լսեց և ինքը հող պատրաստեց եւ- րոպական միահամուռ միջամտութեան համար: Կօնֆերենցիայի անհրաժեշտութիւնը անկասկած է և նա պէտք է գումարվէ կարելիին չափ չուտ:

Կ. Պոլսից հեռագրում են հոկտեմբերի 15-ից. «Փոքր-Ասիական սանջակները համար նշանակ- ված են 5 քրիստոնեայ օգնականներ յոյներից և հայ կաթօլիկներից:

Ռուսաց գործակալութեան հեռագիրը նորերս, ինչպէս յայտնի է, մի տարօրինակ լուր հաղոր- ւեց, որ իւր թէ ռուսաց դեսպան Նէլիզովին վտանգ է սպառնում հայերի կողմից: Գա, ի հարկէ, Բ. Գրան հնարած լուրերից մէկն է, որ ուղղված էր հայերի դէմ: Գա երևում է նրանից, որ հնչեց անցած շաբաթ Նէլիզով, ինչպէս հա- ղորդում են, խորհրդակցութիւն անէր մեծ վի- ղիրի հետ, և շատ խիստ լեզուով այն միտքը յայտ- նեց, թէ Բ. Գրանը պէտք է լուրջ միջոցներ ձեռք առնի Սանսեան կայսրութեան ներքին զրուծիւնը բարեկարգելու համար: Եթե վիզիրը իւր թէ պատարանել է, թէ քննարկների ան- յապաղ իրագործմանը արդեւք են դառնում ի- բանք հայերը, որոնք անդադր յանցաւոր վոր- ձեր են անում, թէ, ի միջի այլոց, Բ. Գրանը տեղեկութիւններ է ստացել, որ հայերը մտադ- րութիւն ունեն եւրոպական դեսպանների կեան- քի դէմ փորձեր անել, և որ այդ պատճառով կա- ուղարկութիւնը իր պարտքը համարեց դեսպա- նատներին պաշտպանութիւնը ուժեղացնել, այն ինչ դեսպանները միայն դժուարութիւններ են յարուցնում Բ. Գրան առջև: Ի հաստատութիւն, թիւրքաց կիսապաշտօնական հեռագրական իւ- ռոն ևս շատեց լուր տարածել, թէ ռուսաց դեսպան Նէլիզովի կեանքին վտանգ է սպա- նում:

Կ. Պոլսից հեռագրում են հոկտեմբերի 12-ից (24). «Այժմ արդէն Կ. Պոլսից հեռանում են և հարուստ հայեր: Գաղթականութեան սկիզբը զրեց օսմանեան առևտրական պաշտօնի նախա- դաճ Արիստակէս Աղաբեան, ամենահարուստը թիւրքիայի հայերի մէջ: Նա թիւրքիայից ստիպ- ված եղած հեռանալ, որովհետև հայկական գաղտ- նի կոմիտէի փող էր պահանջում նրանից և մի քանի անգամ արդէն սպառնացել էր սպա- նել նրան»:

Պարիզից «Daily News» լրագրին հաղորդում են հոկտեմբերի 11-ից (23). «Արտաքին գործե- րի մինիստր Հանտոն և մինիստր-նախագահ Մե- լին շատ երկար խորհրդակցեցին արեւելեան գոր- ծերի և այն միջոցների մասին, որ պէտք է ձեռք առնել ֆրանսիական քաղաքացիների բազ- մաթիւ առևտրական, արդիւնաբերական և ֆի- նանսական շահերը պաշտպանելու համար թիւր- քիայում: Ասում են, որ երկու մինիստրներն ևս այն եզրակացութեան եկան, թէ անհրաժեշտ է կարական միջոցներ ձեռք առնել»:

Կ. Պոլսից «Daily Telegraph» լրագրին հե- ղագրում են, որ Արիէ-էֆէնդիի դատաւարաւո- թեան լուրը ընդհանուր զայրույթ է յարուցա- նում կառավարութեան ղեմ: Մեղադրանքի չա- րախիթները անհիմն են գտնում և դատաւարու- թիւնը անկանոն:

Լոնդոնից «Новости» լրագրին հեռագրում են հոկտեմբերի 14-ից (26-ին). «Նոյնիմբերին այս- տեղից ճանապարհ կընէին Բոլշաքիա մի յանձ- նաժողով՝ տանելով 5.000 ֆունտ դրամ՝ տաու- պելալ հայերին նպաստներ բաժանելու համար:

«Daily News» լրագրին Բերլինից հեռագրում են. «Ռուսաց դեսպան Նէլիզով եւ անդուտ կեր- պով պահանջեց սուլթանից, վերջին ունկնդրու- թեան ժամանակ իլդիդ-Ֆիտիւլում, անյապաղ ի- բագործել խտտացած քննարկները: Սուլթանը մի փոքր զայրացաւ Նէլիզովի խիստ լեզուի պատճառով և նկատեց, որ իբրան, սուլթանին, անհրաժեշտ է աչքի առջև ունենալ իր մահմե- տական հպատակների շահերը և որ, ինչպէս պետութիւնների բոլոր պահանջներին, ինքն իր գաճը վտանգի է ենթարկում: Պ. Նէլիզով պա-

տախտանեց, որ եթէ մահմետականները ապա- տաւրվեն, պետութիւնները նրան պաշտպանու- թիւն կը ցոյց տան, միայն այն պայմանով, որ սուլթանը թող իր նրանց նաւատորմերին ա- ղաւ կերպով անցնել նեղուցները: Այդ հանգա- մանքը շատ յուրեց սուլթանին»:

«Nord» լրագրում տպված է. «Խոսելով Ռու- սաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի համաձայ- նութեան մասին արեւելեան հարցում, անգլիա- կան լրագիրները նորից հանդէս են բերում օս- մանեան կայսրութեան բաժան-բաժան անելու հին ծրագրերը: Որովհետև մենք առաջ արդէն մեր կարծիքը յայտնել ենք Անգլիայի և երկու դաշնակից պետութիւնների մէջ կայանալի համա- ձայնութեան մասին, այդ պատճառով աւելորդ ենք համարում կրկին վերադառնալ այդ հարցին: Մենք կը բաւականանանք միայն յայտնելով, որ օսմա- նեան կայսրութեան բաժան բաժան անելու մա- սին խօսք անգամ չէ կարող լինել: Ռուսաստա- նը և Ֆրանսիան, ի հարկէ, եւ անդուտ կերպով կը զիմադրեն մի այդպիսի փորձին»:

«Daily News» լրագրին Կ. Պոլսից գրում են հոկտեմբերի 10-ից (22-ին). «Սուլթանի իրադէն, նոր հարկեր սահմանելով պահանջում է նոյնպէս ծախսերի կրճատումը զանազան վարչութիւննե- րի մէջ: Նշանակել այդ կրճատման նպատակը զլիսաւորապէս ղեկիցիտի ծածկելն է, որը ներ- կայումս երեք միլիոն թիւրքական լիրայի է հասնում: Մինիստրների խորհուրդը մահմեդա- կանների վրա անձնական հարկ դնելու դէմ կարծիք յայտնեց, սակայն, թէ մի այդպիսի հարկ վրա այնպիսի տպաւորութիւն գործել, թէ թիւր- քիան նախագում է սրբազան պատերազմ: Սա- կայն, բարձր շրջաններում պնդում են այդ մի- ջոցի վրա, սակայն թէ դա անհրաժեշտ է մահ- մետական կրօնը պաշտպանելու համար, որով- հետև քրիստոնեաները, ըստ երևոյթի, պատ- յաստում են նոր յարձակում գործել մահմե- տականների վրա: Այդ նոր միջոցի կողմնակից- ները հաստատում են, բացի դրանից, թէ եւթ- օրական ժամուրը խաչակրաց սպանաւոր է բա- րդում մահմետականների դէմ:

Այն հանգամանքը, որ Լօրդ Սօլսբերիի մեր- ժեց բացատրել Անգլիայի քաղաքականութիւնը արեւելեան հարցում, «Economist» ամսագիրը մի շատ հիմնաւոր յօդուածում մեկնում է նրանով, որ ներկայումս անգլիական կառա- վարութիւնը բանակցում է Ֆրանսիայի և Ռուսաստանի հետ: Այդ երեք պետութիւն- ները, ի հարկէ, իրանց կողմը կը դրաւեն ե- րեքդեռեան դաշնակցութիւնը: Բայց «Eco- nomist» գործերի դրութիւնը ծանր է համարում, որովհետև մեծ պետութիւնները, վերջ ի վեր- ջոյ, կարող են այն մահմետականների դիմա- դրութեան հանդիպել, որոնք չեն ցանկանում, որ սուլթանի քրիստոնեայ հպատակները հաւա- սար իրաւունքներ վայելեն իրանց հետ:

«Times» լրագիրը, խօսելով թիւրքաց նոր հար- կերի մասին, նկատում է, թէ մահմետականները նայում են այդ հարկերի վրա որպէս ապացոյց այն դժուարութիւնների, որոնցով չըջաղատում են սուլթանին «անհաւատները». այդ պատճա- ուով երկու կայ, որ թշնամութեան նոր բռն- կում կարող է լինել քրիստոնեաների դէմ: Եթէ որ և է լուրջ անքա տեղի ունենայ, պետու- թիւնների գործը շատ կը դժուարանայ:

Բերլինի լրագիրները հաղորդում են, որ մօ- տիկ ապագայում սպասում են Կ. Պոլսի դես- պանների նոր հաւաքական քայլին: Այդ առիթով համաձայնութիւն արդէն կայացաւ պետութիւն- ների մէջ և հրահանգներ ուղարկված են դես- պաններին: Այս անգամ դեսպանների գործողու- թիւնը կտրական բնաւորութիւն կունենայ:

Ֆրանսիական լրագիրները պահանջում են ե- ւ անդուտ կերպով ներգործել սուլթանի և Բ. Գրան վրա: «Figaro» լրագրին ասում է, «Եթէ մինչև անգամ պետութիւնների ընդունած որո- չումները կատարելապէս չեն համողի նրանցից իւրաքանչիւրին, այդ դէպքում անգամ պէտք է խօսքից գործին անցնել, և որքան չուտ, այնքան լաւ: Ոչ միայն անհրաժեշտ է աղաւտել Եւրոպան

այդ մշտական կոչմարից, այլ և բաւարարութիւն տալ մարդասիրութեան սկզբունքներին: Անգլիա- ցիները թէև թատրօնական էֆէկաններով են կո- չում անում, բայց այդ սկզբունքները այնու ա- մենայնիւ արդարացի են և արժանի են յարգան- քի: Եւրոպական զիւլոմատիան թող յիշէ Նապո- լէոն III-ի խօսքերը գեներալ Ջիլպիւրիին, Վիլ- լամֆրանկից յետոյ. «Գործեցէք, և ժամանակ մի կորցնէք»:

ՇԱՄԵԼ-ԼԱԿՈՐ

Լրագիրները հաղորդեցին ֆրանսիական սենա- տի նախագահ և ակադէմիկոս Շալմէլ-Լակուրի մահը, որ տեղի ունեցաւ հոկտեմբերի 14-ին:

Շալմէլ-Լակուր Ֆրանսիայի նշանաւոր պետա- կան գործիչներից մէկն է. համարվում, նա ներ- կայացուցիչ էր լուսաւորված բուրժուազական դասակարգի, որը թէև քաղաքական ասպարէ- ղում աղաւտ ձգտումներ է ցոյց տալիս, բայց սօցիալական յարաբերութիւնների վերաբերմամբ շատ յետամնաց գաղափարներ ունի: Նա հան- րապետական էր և իր քաղաքական գործունեու- թիւնն էլ սկսեց դուրս գալով երկրորդ կայս- րութեան ղեմ, իբրև համարձակ հանրապետա- կան, բայց նա պատկանում էր չափաւոր կու- սակցութեան և միշտ հեռու էր փախչում ւար- մատական քաղաքականութիւնից, և այդ պատ- ճառով, նա ոչ մեծ ողբերգութեան, ոչ էլ առե- լութեան առարկայ էր դառնում: Նա մի եւ ան- դուն, անկեղծ համոզմունքների տէր և պերճա- խօս գործիչ էր և իր այդ յատկութիւնների հա- մար վայելում էր ընդհանուր յարգանք, բայց որ և է խոշոր ծառայութիւններ նա չէ կարողացել մատուցանել իր հայրենիքին:

Պօլ Աման Շալմէլ-Լակուր ծնվել է 1823 թ-ին Ալլանշուսէ: Իր ուսումը աւարտելով Ecol Nor- male-ում 1849 թ., նա նշանակվեց փիլիսոփա- յութեան դասաւու Պոի լիցէում, որտեղից յետոյ անցաւ 1851 թ. Լիմոս: Բայց հենց այդ տարի իր հանրապետական գաղափարների համար ար- տաքսվեց Ֆրանսիայից և ամբողջ 8 տարի մը- նայց Բէլգիայում, ուսուցչութիւն անելով: 1859 թ. ընդհանուր ներման (ամնիստիայի) ժամանակ, նա վերադարձաւ Ֆրանսիա և նուիրեա իրան գրականական գործունեութեան, իբրև «Revue des Deux Mondes» հանդիսի փոխ-խմբագիր: Կայսրութեան անկումից յետոյ, նա, 1870 թ-ին, նշանակվեց հանրապետութեան կոմիսար, իսկ 1872 թ-ին ընտրվեց ազգային ժողովի պատգա- մաւոր: Այդտեղ նա իբրև հեռուօր սկսեց նշա- նակութիւն ստանալ և անուն հանել, մինչև որ 1876 թ-ին ընտրվեց սենատի անդամ: 1879 թ. նա նշանակվեց դեսպան Բէրլինում, իսկ մի տա- րուց յետոյ Լոնդոնում, իսկ այդ տեղից վերա- դառնալով, 1882-ին, Ֆերրիի կարիքտի մէջ ստանձնեց արտաքին գործերի մինիստրի պաշ- տօնը, որը թողեց մի տարուց յետոյ, 1883-ին:

1885-ին նորից ընտրվեց սենատի անդամ, ապա սենատի փոխ-նախագահ, իսկ 1893-ին՝ նախագահ: Հենց այդ տարի նա դառնեց «ամմահներ» չարքը, և ստացաւ Բէնդիի աթոռը: 1894 թ. Կարնոի մահից յետոյ, ինչ- պէս և 1895-ին, Կադիսիի Պէրիի հրաժարակա- նից յետոյ, նա հանրապետութեան նախագահի պաշտօնի համար ամենահաւանական կանդի- դատներից մէկն էր, բայց ինքն յօժարակամ հրաժարվեց ընտրվելուց:

Իբրև դրական գործիչ նա յայտնի է գերմա- նական փիլիսոփայութեան մասին դրած իր չա- րաղրութիւններով և լրագրական գործունեու- թեամբ:

ՆԱՄԱԿ ՊԱՐՍՅԱՍՏԱՆԻՑ

Թաւրիզ, հոկտեմբերի 6-ին

Անցեալ անգամ հաղորդել էի հացի խնդրի պատճառով նոր նահանգապետի և թագաժա- նանգի մէջ տեղի ունեցած երկպառակութեան մասին: Արդէն խտտութեամբ պահանջվում էր մայրաքաղաքից՝ թագաժառանգի Թաւրիզից մեկ- նելը, և թագաժառանգը միայն յետոյ հասկա- նալով իր արած սխալ քայլը, չտապեց որքան կարելի է չուտ դնալ նահանգապետի մօտ և հաշտվել նրա հետ: Իսկ Ամինը-Բօլլան սիրով ընդունեց նրան և հաշտվեց:

Սուլուղբուլաղից 36 մղոն հեռաւորութեան վրա գտնվող Սինայի քաղաքում թաւաւա -

Типографія Канцел. Главн.нач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. ваз.